

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Վարդանանց ճակատամարտի տօնին, ինչպես նաև «Մար Մարուն»ի տօնին առիթներով, ԱՐԱՐԱՏ լոյս չի տեսներ Ուրբաթ և Շաբաթ:

Մեր յաջորդ թիվը՝ Երկուշաբթի, 12 Փետրուար 2024-ին:

Խմբագրական

ԱՄԲԱՅՐԵԱՆ ՎԵՐԱՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Հայոց պատմության երկարաշարան ճակատամարտերու շարքին, Աւարայրի հերոսամարտը միաներէն կը տարբերի բովանդակային և խորքային առումներով: Բազում ռազմական յաջողութիւններու մասին հազուադէպով կը խօսուի, սակայն Աւարայրի դիպագամարտին փառահեղ նշումներն ու ոգեկոչումները, ցայսօր, կ'առիւթնեն հայրենեաց սիրտերն ու հոգիները: Ինքնատիպ և ուսանելի խորհուրդ մը կայ անոր մէջ. սերունդներու դաստիարակութեան համար՝ ուղեւորային և օրինակելի պատգամ մը՝ որուն հընչեղ ոգովանջին հաւատարմութիւն ունկնդիրն ենք առ այսօր:

Եթէ մինչեւ 451 Մայիս 26, հայկական զօրքերուն մաքառումները հայրենիքի պաշտպանութեան կամ անոր սահմաններուն ընդարձակման համար էին, եթէ նախապէս հայրենի հողը անխաբար պահպանելու հրամայականն էր դրուած հայոց բանակին առջեւ, ապա Տրդմուտ գետի ափին մղուած զոյապայքարի ընթացքին և խօսական զուպարին, հայրենիքի կողքին, հաւատքի նուիրական գերխնդիրն էր առաջադրուած: Ուրեմն, զոյգ անկողնայտելի արժէքներ մղեցին սպարապետ Վարդան Մամիկոնեանն ու իր համախոհ նախարարները՝ ուղղուելու ռազմադաշտ. նաեւ՝ հայոց հոգեւորական դասը՝ կաթողիկոսէն սկսեալ մինչեւ գեղջուկն ու մշակը, սովորական քաղաքացին եղան զինակիրները յանուն Քրիստոնէութեան մղուած այդ սրբազան պատերազմին: Փաստօրէն, Աւարայրը բախտորոշ փորձաքար էր հայութեան համար, քանզի Մասանեան Կայսրութեան կողմէ նետուած էր ձեռնոցը. հայեր, պիտի մնայի՞ք կառչած քրիստոնէական հաւատքին, թէ՛ տրամադիր էք հաւատարացութեան շարունակելու համար ձեր անորոքաւտ կեանքը՝ պարսկական լուծին համակերպած: Ուրեմն՝ Գամոկլեան սուրի նման կախուած էր երկրորդ մկրտութեան հրամայականը: Եթէ առաջինը՝ 301-ին՝ հոգեւոր մկրտութիւնն էր՝ Գրիգոր Լուսաւորչի ձեռնադր, ապա 451-ին՝ արեան մկրտութիւնն էր՝ Վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ: Հայոց պատմութեան կտրուկ էր, հատուկ էր, դարերու տոկոսով, անխախտելի՝ նաեւ՝ «Ո՛չ» դասականօրէնական, «Ո՛չ» հայրենագրկումին և «Ո՛չ» ազգային-հոգեւոր բռնութեան: Ուստի՝ անխախտելի էր հակընդդէմ ուժերուն ճակատամարտը:

Չուտ ռազմական առումով, պատերազմին ելքը կանխատեսելի էր: Հօրապատ կայսրութեան դէմ կը ծառանար ենթակայ մարզպետութիւն մը՝ մնալով միայնակ ընդդէմ ճակատագրին: Սակայն՝ անոր ընթացքի մասին հոգիներն կենսապիշն էր, իսկ գրաւականը՝ հաւատքը: Իբր, խաչն ու սուրը միացած էին Տրդմուտի ափին: Հետեւապէս՝ վերջին խօսքը կը պատկանէր արիւնաշաղխ ճակատամարտին: Ամբարտաւան Յազկերտ արքան, իր փրօցուող հրովարտակով և շրջապատուած դժնէ փուշտիպաններով, չկրցաւ ան ու սարսափի մատնել Վարդանանց մարտիկները՝ որոնք Եղիշէ պատմիչի սահմանումով՝ «Մահ ոչ իմաց-


եալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է» սկզբունքով գունդագունդ և դասակ-դասակ կ'առաջնորդուէին Աւարայր: Պարսկական զօրքը՝ իր սուրակաւոր ու մկրուդաւոր գունդներով, պապղուն ճշմաններով սպառազէն, շողջողուն փքիններով ու խաղերով զինուած՝ վստահ էին հեշտ յաղթանակին: Բայց, հայկական ուժերը՝ կապարճներով լի, վաղակներով և փայլուն ասպարներով զինուած՝ պատրաստ էին ապաժոյծ մարտիրոսանալու՝ վասն հայրենեաց ու հաւատի: Եւ... մեր պատմութեան մէջ կորոզուեցաւ անուն մը սրբազան՝ Վարդանանց հերոսամարտ, որ եղաւ գոտեպնդող, արիացընող և ոգեկոչեցնող կռուան մը դարերու երկայնքին: Արդարեւ՝ հոն ուր պայքար է առկայ, հոն ուր ինքնապաշտպանութեան կռիւ կայ մղելու, հոն ուր մարտական գործողութիւն պիտի ըլլայ, հոն ուր ազգային-բարոյական ոգորուն կայ անյապաղ՝ կըրնանք ընդմշտաբար սաւառնաթոյշ ոգին Վարդանանց:

Քաջն Վարդանն ու հայ նախարարներ, կաթողիկոսն ու փափկասունք տիկնայք, քահանայք ու հետեւակներ կարթակոտոր ինկան կամ գերեզարուեցան պարսկական ահեղ զուգահին ամենի խոյանքին դիմաց, բայց սերունդները ունեցան հրիտակ մը անխելի՝ գիտնալ «Ո՛չ» աղաղակել բռնակալութեան, ազգորացութեան և ստրկամրտութեան: Ահա այստեղ է Աւարայրի արեան մկրտութեան մեծագոյն իմաստը: Աւարայրեան մկրտութեան պատգամը:

Ընդհանրապէս, այս առիթով, կը կանգնիք, Աւարայրի հերոսամարտին հայկական կողմին համար անփառունակ աւարտով: Միջշէտ, այս հակամարտութիւնը իր լրումին չհասաւ Վարդանի և 1036 նահատակներու դիտապատ տապալումով: Այլեւ շարունակուեցաւ յաջորդող տարիներու ընթացքին՝ մինչեւ 484 թուական, երբ Նուարսակի կաշնագիրով խաղաղարար եզրակացութեան յանգեցան հակամարտ կողմերը: Այս անգամ՝ Վահան Մամիկոնեան եղաւ նուաճողը այս դրական արդիւնքին, երբ Յազկերտի յետնորդները համոզուեցան թէ ի գործ է ճգնիլ հայր ենթարկելու համար: Հետեւաբար, Վարդանանց արեան մկրտութիւնը, տարիներ ետք, փառապաշտուեցաւ դալարագեղ դասերիներով:

Անցան դարեր: Շատ ջուրեր հոսած են մեր պատմութեան դարձնարձիկ ոլորաններէն: Նմանատիպ ընդհարումներ եղան անպակաս մեր գլուխէն: Այսօր եւս նոյնպիսի սպառնաշունչ քամիներ կը փչեն աչքն ու ծախսէն: Կարծէք ամէնօրեք Աւարայր է՞ ոչ միայն ռազմական, քաղաքական կամ հոգեւոր ոլորտներէ մերս: Աւարայր է բարոյական, ազգապահպանման, լեզուի և մշակոյթի առումներով նաեւ: Աւարայր է հոն ու հոն: Քիչ մը ամէն տեղ և դաժան ու մտայլ հորիզոններ կ'որոտագծուին մուգ ամպերու հանգոյն:

Լուծո՞ւմը: Համազգային մէկ որոշում՝ **ԱՄԲԱՅՐԵԱՆ ՎԵՐԱՄԿՐՏՈՒԹԻՒՆ...**
Այո, **ԱՄԲԱՅՐԵԱՆ ՎԵՐԱՄԿՐՏՈՒԹԻՒՆ:**



ԼՈՒԾՈՒՄԻ ԲԱՆԱԼԻՆ

Լիբանանի սիւննի իսլամ համայնքի առաջնորդ շէյխ Ապտըլլաթիֆ Տըրիան յայտարարեց, թէ հանրապետութեան նախագահի ընտրութիւնը բանալին է բոլոր հարցե-

տելցուց, որ ուշ կամ կանուխ այդ հողը պիտի ազատագրուի ու գրաւողը պիտի վտարուի:

ՉՈՐ ՍԸ ԶԱՐԱՒԻ ՄԵՋ

Չարաւային Լիբանանի էսիւմ քաղաքին մէջ բնակարանի մը վրայ խորայելեան անօդաչու թռչող սարքի մը



րու լուծումին: Ան դատապարտեց դրամատուներու կողմէ քաղաքացիներուն ի պահ դրած գումարներուն վրայ դրուած կալանքը: Փտածութիւնը և արտաքին ուժերէ կախեալութիւնը ան համարեց երկրի հիմնական պիտոյքը: Մուֆթի Տըրիան, Աքսա մզկիթի, Երուսաղէմի և Պաղեստինի ազատագրումը համարեց կրօնական պարտաւորութիւն, որովհետեւ ան Աստուծոյ կալուածն է ու զայն պէտք է պաշտպանեն բոլոր արաբները և իսլամները: Ան



կատարած յարձակումին հետեւանքով գոհուած է մէկ քաղաքացի ու կան նաեւ երկու վիրաւորներ: Միւս կողմէ, Չըզպալլա յայտարարեց, թէ «Ֆալաթ-1» ճշգրիտ հրթիռով ռմբակոծած է Գալիլիոյ «Կըրպէթ Մա-հըր» խարխիւրը ու հասցուցած է մեծ վնաս:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, 6 Փետրուար 2024-ին, ՄՂԿ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինին հրաւերով տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով, մասնակցութեամբ անցեալի և ներկայի Լիբանանի Վարիչ Մարմիններու ընկերներուն:

Կառուցողական և շինիչ մթնոլորտի մէջ ընթացած ժողովին, ընկերները քննարկեցին գաղութէն ներս տիրող իրավիճակը և ապագայի մարտահրաւերները, ներգաղութային հարցերն ու դժուարութիւնները, և առաջարկուեցան խնդիրները դիմակայելու ձեւերն ու միջոցները:

ՄՂԿ ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐԱՍԻ ԿԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

6 Փետրուար 2024

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՆԿԱՐԵԼԻ Ե ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐՈՎ

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան Ազգային ժողովին առջեւ իր խօսած ճառին մէջ յայտարարեց, թէ պատմական արդարութեան հասնելը դրուած է երկրի սահմանադրութեան մէջ, սակայն չէ ճշդուած թէ որն է այդ արդարութիւնը: Ըստ վարչապետի, տարբեր քաղաքական հոսանքներու համար կան տարբեր պատմական արդարութեան պահանջներ: Ըստ վարչապետի, պէտք է ներքին հակասութիւնները նուազեցնել ու որդեգրել պետական քաղաքականութիւն հիմնուած մէկ յստակ պահանջքի փաթեթի վրայ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՏՐՊԵՅՃԱՆ ԺՈՂՈՎ

Երէկ Հայաստանի ու Ատրպեյճանի փոխվարչապետները ժողով գումարեցին Իջեւան-Ղազախ սահմանային



կետին վրայ: Ժողովը տեսած է բաւական երկար ժամանակ, սակայն որեւէ մանրամասնութիւն չէ հրապարակուած անոր մասին:

ՁԵՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԻՐԱՆԻ ՄԵՋ

Իրանի «Թասնիմ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ հետախուզական ծառայութեան անդամներ ձերբակալած են Իրան մտած իսլամ մը ահաբեկիչներ, որոնց նպատակն էր երկրին մէջ ահաբեկչական գործողութիւններ կատարել: Խումբը կը կառավարուէր Ատրպեյճանի հողամասին վրայ գտնուող կեղծուէ մը: Անցեալ շաբաթ Իրան ձերբակալած էր իսրայէլեան Մոսատի 28 գործակալներ:

ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՍ

Իրանի նախագահ Իպրահիմ Ռայիսի յայտարարեց, թէ Միացեալ Նահանգներ կը համարուի անկայունութեան գործօն մը Իրաքի և Սուրիոյ մէջ: Ան է որ կ'արժարծէ տագնապներ շրջակին մէջ:

Կազայի պատերազմի պարագային, Ռայիսի յայտարարեց, թէ պաղեստինցի ժողովուրդն է յաղթողը, որով-




հետեւ պատերազմի ծագելէն չորս ամիս ետք տակաւին Իսրայէլ չէ կրցած իր դրած նպատակներն որեւէ մէկուն մէջ յաջողութիւն արձանագրել: Ան օտար դէսպաններուն կոչ ուղղեց աշխատելու պաղեստինցի ժողովուրդին ազատութիւն ու ինքնորոշումի իրաւունք ապահովելու համար:

«ՄԵՆԷ ԱՄԷՆ ԿԵՐՊ ՊԱՏՐԱՍ ԵՆԷ ԱԶԿԱՅԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՐՅՈՎ»

ԽՐԻՍԹՈՍ ՍՈՖԻԱՆԱՓՈՒՆՈՒՄԸ՝ ԱԼԵՆ ՍԻՄՈՆԵԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեանը ընդունած է Հայաստանի մեջ Յունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Խրիսթոս Սոֆիանափոուլոսը:

Աժ նախագահը շնորհավորած է դեսպանը նշանակման առթիվ՝ մաղթելով յաջողություններ պաշտօնավարման ընթացքին:



Սիմոնեան գոհունակությամբ նշած է Հայաստանի եւ Յունաստանի միջեւ հաստատուած ամուր բարեկամական յարաբերութիւններուն մասին, որոնք հիմնուած են հայ եւ յոյն ժողովուրդներու դարաւոր եղբայրութեան, փոխօգնութեան եւ ընդհանուր արժեքներու վրայ:

«Հայ-յունական միջպետական յարաբերութիւնները կը գտնուին բարձր մակարդակի վրայ, մինչդէռ միջխորհրդարանական համագործակցութիւնը չիրացուած մեծ ներուժ ունի: Անհրաժեշտ կը համարեմ խթանել մեր խորհրդարաններուն միջեւ համագործակցութիւնը նաեւ փոխադարձ այցերու ձեւաչափով», նշած է Աժ նախագահը:

Ալեն Սիմոնեան կարեւորած է միջազգային խորհրդարանական տարբեր կազմակերպութիւններուն մէջ երկու խորհրդարաններու ներկայացուցիչներուն սերտ համագործակցութիւնը: Աժ նախագահը բարձր գնահատած է Յունաստանի հետ համագործակցութիւնը ԵՄ-Հայաստան Յամապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի շրջանակին մէջ, ինչպէս նաեւ Թուրքիոյ ծրագրով յունական աջակցութիւնը Ազգային ժողովին:

Չրուցակիցները անդրադարձած են Հայաստան-Յունաստան-Կիպրոս համագործակցութեան եռակողմ ձեւաչափին:

Անդրադարձ կատարուած է Հայաստան-ԵՄ յարաբերութիւններուն, Հարաւային Կովկասի մէջ առկայ անվտանգային խնդիրներուն, մասնաւորապէս՝ Ատրպէյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին դէմ իրականացած ցեղային գոման հետեւանքով յառաջացած մարդասիրական խնդիրներուն, տարածաշրջանին մէջ խաղաղութեան հաստատման ծիրին մէջ Հայաստան-Ատրպէյճան բանակցութիւններու գործընթացին:

Խրիսթոս Սոֆիանափոուլոսը բարձր գնահատած է տարածաշրջանին մէջ խաղաղութեան հաստատման առումով Հայաստանի վարած քաղաքականութիւնը:

«Յունաստանը կ'ողջունէ եւ կը սատարէ Հայաստանի մօտեցման» խաղաղութեան հաստատման գործընթացին մէջ, քանի որ այն հիմնուած է միջազգային իրաւունքի, իրաւաստութեան վրայ եւ կ'իրականացուի դիւանագիտական ճանապարհով: Մենք ամեն կերպ պատրաստ ենք աջակցելու Հայաստանին խաղաղութեան հաստատման հարցով», ընդգծած է դեսպանը:

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՉՈՒԻՑԵՐԻԱՆ ԲԱՂԱԶԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԱԾ ԵՆ

Երեւանի մէջ տեղի ունեցած են քաղաքական խորհրդակցութիւններ Հայաստանի Հանրապետութեան եւ Չուիցերիոյ Համադաշնութեան արտաքին գործերու նախարար-



րութիւններուն միջեւ: Այս մասին հարորդագրութիւն տարածած է Հայաստանի Արտաքին գործերու նախարարութիւնը:

Հայկական պատուիրակութիւնը կը ներկայացնէր ԱԳԸ Երուպայի վարչութեան պետ Սամուէլ Մկրտչեանը, գուիցերիական պատուիրակութիւնը՝ արտաքին գերատեսչութեան Երասիական տարածաշրջանի վարչութեան պետ Սուրիէլ Փենըվերը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, 6 Փետրուար 2024-ին, Աթիլիայի Մայրավանդի մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մէջ Յունաստանի տարածաշրջանի դեսպանուհի Տեսփինա Շուքուրիսը:



Վեհափառ Հայրապետը ընդհանուր գծերով ներկայացուց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կառոյցն ու առաքելութիւնը եւ անդրադարձաւ Լիբանանի ներկայացուցչութեան ու յատկապէս տնտեսական տագնապին եւ նախագահական ընտրութեան առնչուած աշխատանքներուն: Նորին Սրբութիւնը նաեւ խօսեցաւ անցեալ տարի Յունաստանի թեմին շնորհած իր Հովանապետական այցելութեան եւ վարչապետին ու յոյն եկեղեցւոյ հոգեւոր պետին հետ ունեցած հանդիպումներուն մասին:

Դեսպանուհին, իր կարգին, Հայրապետին յայտնեց Յունաստանի կառավարութեան վարած ներկայ քաղաքականութիւնը՝ ընդհանրապէս Միջին Արեւելքը ու յատկապէս Լիբանանը յուզող հարցերուն առնչութեամբ:

ԵՄ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ԵՐՈՒՍՈՐԶՐԳԱՐԱՆԸ ՊԱՅՄԱՆԱԻՐՈՒՄ ԵՆ ԱԻԵԼՅՆԵԼ ՆԵՐՊՐՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՐՉԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՈՒՐՄԻՆ ՄԷՋ

ԵՄ խորհուրդի Պելճիբայի նախագահութիւնը եւ Երուսուրդարանի բանագնացները նախնական համաձայնութեան հասած են Երուսուրդի համար ռազմավարական արհեստագիտութիւններու հարթակի (STEP) շուրջ, որ կը նախատեսէ 1,5 միլիարդ եւրոյի ներդրումներու անվաճում պաշտպանական մշակումներու համար: Այս մասին կը նշուի ԵՄ խորհուրդի տարածած մամուլի հարորդագրութեան մէջ:



«Պաշտպանութեան ոլորտին մէջ ներդրումային հնարավորութիւնները մեծցնելու համար լրացուցիչ 1,5 միլիարդ եւրո պիտի յատկացուի Պաշտպանութեան Երուսուրդական հիմնադրամին», կը նշուի հարորդագրութեան մէջ:

«Այսօրուան համաձայնագրին շնորհիւ մենք պիտի միաւորենք ԵՄ-ի պիտոճէն ֆինանսաւորումը՝ գորաշարժի ենթարկելու ներդրումները խոր եւ թուային արհեստագիտութիւններու, մաքուր արհեստագիտութիւններու, եւ կենսա-արհեստագիտութիւններու ոլորտին մէջ, որոնք որոշիչ նշանակութիւն ունին Երուսուրդի կողմէ այդ ռազմավարական հատուածներուն մէջ մրցակցային առաւելութիւնը պահպանելու գործին մէջ», յայտնած է Պելճիբայի արտաքին գործերու նախարար Հանա Լապիպը:

STEP հարթակի նպատակն է գորաշարժի ենթարկել ներդրումները ռազմավարական արհեստագիտութիւններու բնագաւառին մէջ

Նախնական համաձայնագրին այժմ պետք է հաւանութիւն տան ԵՄ խորհուրդն ու Երուսուրդարանը՝ նախքան երկու հիմնարկներուն կողմէ պաշտօնական հաստատումը:

ՄԱՐԴԸ ԵՒ ...

«Մարդը անարգ եւ ստոր մի արարած է, եթէ նա մարդկայինից անելի բարձր չէ»: Լատինական

Կենդանական աշխարհի միակ ասուն արարածն է մարդը, ինչպէս նաեւ ամենից քիչ ճանաչուածը: Միայն չէ ասուած, թէ «Անելի դիրքն է արածեցնել կենդանիների մի արժող նախիր, քան մի մարդ կառավարել», որին համահունչ է՝ «Անելի հեշտ է ճանաչել որեւէ կենդանու, քան մօտ մի բարեկամի»: Հեռաւոր ժամանակներից դեռ մարդ արարածը հարորդակցուելու կարիք է զգացել եւ տարբեր տեսակի շփումներ ունեցել, իր ցեղակիցներից բացի, նաեւ այլոց հետ, մինչեւ իսկ շահադիտական նպատակով: Մարդիկ ընտանիքով իրար այցելելու վարժուած էին: Այդ շփում-հանդիպումների առիթով անելի հաճելի ժամանակ ունենալու միտումով ստեղծուել են տարբեր տեսակի ու բովանդակութեան խաղեր թէ՛ մեծերի եւ թէ՛ անչափահասների համար, ինչպէս թղթախաղերը, տաման, նարդի, որ ազգային բնոյթի են դարձել: Պարզ ասած, հանդիպելը եւ անցեալը յիշել-պատմելը անհրաժեշտութիւն էր դարձել, մանաւանդ խարբերոցի, վանեցի, մշեցի կամ Եղեռնից ճողոպրած այլ համագիւղացիների համար՝ աքսորի սարսափը պատմելով վերապրելը: Այդպէս է, որ ստեղծուեցին լրաբերները, նամակագրութիւնը, սուրիանդակները, լրագրերը, ռատիօն եւ հեռաւեպերը, վերջապէս՝ այսօրուայ բջջային հեռախօսը, որ դարձել է մարդկային կատարելալ չարիք, պատուհաս: Այլեւս առաջացել է բազմութեան մի տեսակ, որի ուղեղը այլեւս չի գործում, ամէնուրեք նրան փոխարինում է հեռախօսը, առանց որի՝ ոմանք այլեւս չեն ապրում:

Ի դէպ տեսայ մի զուգուշտալի, սրամիտ պատկեր, ուր յայտնի էրեք կապիկների նկարը, որ մինչ այսօր ցուցադրուում էր նրանց բերանը, աչքը եւ ակնաչքը ծածկուած եւ նշանակում էր՝ բան չեն տեսել, չեն լսել եւ ասելիք չունեն, նրանց կողքին անվաճել էր չորրորդը կապիկը՝ ձեռքին հեռախօս, որ կատարելալ արդի համատարած պատկեր է՝ փողոցում տանը եւ ամէնուրեք:

Համաշխարհային հանրութիւնը շարժա-մոլորուած է, նրան թմրեցրել են եւ փորձում են դարձնել արհեստական իմացականութեան (Intelligence artificielle) ստորադաս, այն սկզբունքով, թէ պարտադիր չէ որ ամէն ինչ մտածելու, որոշելու ունակ լինեն եւ դրա կարիքը եւս չկայ: Ընտրելուների՝ բնակչութեան մօտ ասան տոկոսի պարտականութիւնն է այդ եւ այն կ'անեն նորագոյն ռուպոր մեքենաների՝ արհեստական ինտելիգենցիայի (բանականութեան) օգնութեամբ, իսկ ամբողջի բոլոր քայլերը կը վերահսկուեն հեռախօսի միջոցով, քանզի ոմանք պարագային այն է փոխարինում ուղեղին: Նախկին «Բաժանի՛ր, որ տիրես»-ին կցուել է «Թմրեցրո՛ւ, շարժեցրո՛ւ որ տիրես»-ը: Այլ նպատակ չկայ: Նայիր չորս կողմի, սիրելի ընթերցող, եւ կը նկատես, որ ամէն կողմից քեզ պարտադրում են քո ուտեստը, գնումները, հագուստը եւ այլն գովազդի եւ այլ միջոցներով եւ շատերն են ենթարկում:

Ոմանք կարծում են, թերեւս նաեւ վստահ են, թէ հեռախօսի եւ նման այլ սարքերի բռուն տարածումն ու զարգացումը բարեկեցութեան (comfort), առաջընթացի նպատակով են արուում: Այդ կարծիքը ունեցողները չարաչար սխալուում են, նախ որ մեր բարոյութեան համար մատ շարժող չկայ, եթէ մեծ շահաբերութիւն չի կրող ձեռնարկած որեւէ քայլի դիմաց, իսկ գործարար անձը միայն շահ է ճանաչում եւ այլ տեսիլք ու նպատակ չունի:

Ամեն տարի հայրենիքը կատարած մեր այցելութիւններին, փողոցի երթեւեկութեան խտութիւնը աննկատ չի մնում, որ անընդհատ անցնելու հակում ունի, եւ ըստ Եուրոպայի բարեկեցութեան նշան է: Աննկատելի չեն նաեւ երթեւեկութեան անկարգ բնոյթն, անհաշիւ խճուղումները՝ բազում վթարներով ու զոհերով:

Փաստօրէն ճակատագրական եւ ազգային չարիք է, մինչեւ իսկ պատուհաս լինելու աստիճան, փողոցում երթեւեկող մեքենաների (ինքնաշարժ) քանակը: Սկստի չունեցը միայն ռետինե անիւներով մետաղեայ գանգուածը, որ մեր հայրենաբնակների թիւ մէկ կոմքն է դարձել տարիներ ի վեր, այլ նաեւ այն վարելու իրաւունք ունեցող մեծաքանակ տիմարները, որ հեռու են բանականութեան տարրական մակարդակից եւ գտնում են ղեկին՝ հեռախօսը ձեռքին: Իրականում Երեւանի գործող փողոցների անհրաժեշտ ընդհանուր մակերեսը անբարարար է շրջանառութեան մէջ եղած մեքենաների քանակի համեմատ: Կարծում եմ արդէն ժամանակն է, որ Երեւանի քաղաքապետարանը հիմնական փոփոխութիւններ անելու կարիք ունենայ մայրաքաղաքի յատկազգծի առումով եւ անելի լուրջ ուղարկութեան արժանացնի քաղաքը շրջանցելու նոր ճանապարհի (periphérique)՝ իրականացմանը, նրա հետ նաեւ առնուազն չորս եւ անելի նոր կամուրջների կառուցմանը Հրազդան գետի վրայ: Այդ է եղած խառնաշփոթի միակ լուծման միջոցը: Կլոպիսին եր Թամանեանի յատկազգծը, որ մնում է մինչ այսօր:

Ի՞նչ ասել անիմաստ այն երեւոյթին, որ մեր անտեսաց երկրի ճանապարհային երթեւեկութեան անհամար ողբալի վթարների զգալի մաս են կազմում ճակատային բախումները, որ նշանակում է թէ երեւի վարորդները իրար բէն տեսել, քանզի զբաղուած են եղել հեռախօսով կամ բարձր արագութեամբ սուրարով՝ անբաժան ծխախոտը ձեռքին՝ վրիպել են: Բացառուած չէ նաեւ, որ տիմար յամառութեան պատճառով չեն ցանկացել իրար զիջել: Անտեսելի է նոյնպէս թմրամիջոցի առկայութեան վարկածը:

Լուրջ խնդիրների առջեւ ենք եւ թշնամու դիպուկահարների կրակոցներից ողբալի զոհերի թիւը մեր տգիտութեամբ անվաճելու աղետ է: Ենթադրելի է, որ նախքան մեքենայ գնելը շատերը անտեսում են վարորդական դասընթացին հետեւելը: Այդպիսիները առանց վարելու տարրական գիտելիքների են մտնում երթեւեկութեան ոլորտ, անգիտակցաբար դառնալով հասարակութեան վտանգ եւ բազում վթարների հեղինակ: Անյայտ է, թէ ինչպէս է բուժուելու այդ արատը:



ԱՐԱՐՍ Տնտեսական

ԼԻԱԿԱՆ

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԱՄԱՎԱՐԿ

Պետության 2024 տարուան ամավարկը կամ պիտոճեմ վաւերացուել է ետք խորհրդարանին կողմէ սկսաւ անոր հանդէպ քննադատութեան արշաւ մը երկրի տնտեսական կարգ մը կառոյցներուն կողմէ: Երկրի սպառողներու ընկերակցութիւնը մարտարեց, թէ ապրանքի վրայ դրուած տուրքին չափը եւ ընկերութիւններու վճարելիք տուրքը, որ կրնայ հասնիլ շահի 20 առ հարիւրի, անընդունելի են: Անոնք միջոցներ են երկրին 95 առ հարիւրը կազմող բնակչութեան հասցնելու մեծ վնաս: Ըստ ընկերակցութեան, օտար երկիրներու մէջ տուրքը հաւասարակշռութիւն յառաջացնելու միջոց մըն է, մինչ Լիբանանի մէջ այդ մէկը կարելի չէ ըսել, որովհետեւ իսկական հաշուետուութիւն չկայ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՆԻԺ

Երասիական տնտեսական միութեան երկիրներ իրարու հետ իրենց առեւտուրը կը կատարեն ազգային դրամակիչով: Այդ համեմատութիւնը հասաւ 90 առ հարիւրի: Այսինքն, անդամ երկիրներու իրարու հետ առեւտուր կը կատարեն ազգային դրամակիչը օգտագործելով 90 առ հարիւր համեմատութեամբ:

Հանքագործներու միութեան նախագահ Վարդան Ծհանեան յայտնեց, որ Ատրպէյճան ծրագրուած ձեռով թիրախ կը դարձնէ Հայաստանի Հանրապետութեան կայուն աճ արձանագրող մարզերը: Հանքարդիւնաբերութիւնը եւ ուժանիւթ արտադրութիւնը Հայաստանի տնտեսութեան ողնայարն են ու կայուն աճի աղբիւրներ: Այս է պատճառը որ յաճախ այդ մարզերու կառոյցներ թիրախ կը դառնան Ատրպէյճանի յարձակումներու:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼ

ԵԳԻՊՏՈՍ ԵՒ ԹՈՒՐԵԻԱ

Եգիպտոսի տնտեսութիւնը սկսաւ դիմագրաւել եկամտուի նուազում Սուէզի ջրանցքը օգտագործող նաւերու թիւի նուազումին պատճառով: Կազայի պատերազմին հետեւանքով Եմէնի պարտադրած պաշարումը պատճառ դարձաւ, որ նաւեր չօգտագործեն Կարմիր Ծովը ու Սուէզի ջրանցքը որպէս անցք:

Ռուսական առեւտրական «Վետոմոսթ» օրաթերթը յայտարարեց, թէ թրքական դրամատուներ Արեւմուտքի ճնշումի ազդեցութեան տակ սկսած են փակել ռուսական ընկերութիւններու դրամատուներու հաշիւները ու սկսած են դժուարացնել ռուս անհատներու դրամատուային գործերը: Միացեալ Ասիաներու նախագահը ստորագրած էր օրէնք մը, ըստ որուն, այն դրամատուները որոնք կը դիրացնեն ռուսական դրամատուներու գործերը պիտի ենթարկուին պատժամիջոցներու:

ԱՍԻԱ

ԱՆՇԱՐԺ ԳՈՅՔԻ ՏԱԳՆԱՊ

Երբեմնի հզօր անշարժ գոյք կառուցող եւ վաճառող չինական ընկերութիւն «Էլքոնրաստե» կը գտնուի լուծարումի վտանգին առջեւ: Ընկերութիւնը սնանկացաւ, որովհետեւ չկրցաւ վերաֆինանսաւորել իր առած պարտքը: Վերջին տարիներուն յաճախորդներու թիւը նուազեցաւ: Կառավարութիւնն ալ ձեռքը քաշեց այս մարզէն ու պարտքի դրամ չտուաւ այս մարզին: Մասնագետներ կը վախնան որ այս փլուզումը պատճառէ մեծ անկում Հիւսսատանի տնտեսութեան մէջ:

Ճափոնի մէջ 1955 թուականէն ի վեր իշխող Ազատական դեմոկրատ կուսակցութեան մէջ սկսած է քննութիւն, ընտրական օժանդակութեան իւրացումի հայցի մը շուրջ: Վարչապետ Ֆույսի Էիշիտայի ժողովրդականութիւնը նուազած է այս հարցին պատճառով: Չորս նախարարներ հրաժարեցան կառավարութենէն այս պատճառով:

ԱՄՆ

ՄՏԱՅՈՒՄՆԵՐ ԱԿԵՏԵՐ

Միացեալ Ասիաներու մէջ աշխատող ընկերութիւններու մտահոգութեան հիմնական կետերէն մէկն է տնտեսական անկումի վախը: Մանաւանդ նորահաստատ ընկերութիւններու համար տնտեսական պահանջարկի նուազումը կը համարուի մտահոգիչ կետերէն մէկը: Ընկերութիւններու ունեցած պարտքի մեծ ծաւալը ու անոր համար վճարող տոկոսի յաւելումը կը համարուի մտահոգութեան երկրորդ կետը: Այսօր կը համարուի երրորդ կետը մտահոգութեան: Գինի յաւելումի պատճառով յաճախորդը աւելի նուազ ապրանք կը գնէ, իսկ պաշտօնեան յաւելումը կը պահանջէ իր ծախքը կատարելու համար: Չորրորդ մտահոգութիւնը գոնկրեսիւն մէջ մնալուն վեճն է երկու կուսակցութիւններուն միջեւ պիտոճեմի համար: Այս գործօնը կրնայ որբէւ ատեն փակել կառավարութիւնը ու դառնալ անկայունութեան գործօն:

ԱՄԵՐԻԿԱ

ԳԱՆԱՏԱ ԵՒ ԳՈՒՈՍԿԻԱ ՍՂԱԾ ԵՒ ՓՏԱԾՈՒԹԻՒՆ

Գանատայի մէջ հիւանդներ կը գանգատուին բժիշկներու եւ հիւանդապահներու թիւի նուազումէն: Պատճառը այն է, որ սղաճի պատճառով այս մասնագետները աշխատավարձի յաւելում կը պահանջեն: Կառավարութիւնը չի կրնար տալ այդ յաւելումը, ուրեմն մարդիկ կը մեկնին ԱՄՆ, ուր վճարումի աւելի լաւ պայմաններ կան: Այս պատճառով բժիշկներ ժամադրութիւն կու տան ամիսներ ետք, որովհետեւ պահանջարկը նոյնն է, սակայն ծառայողներու թիւը պակասած է:

Գոլումպիայի քուէարկողները ամիսներ առաջ ընտրեցին իրենց առաջին ընկերվարական նախագահը՝ Կուսթաֆ Փեթրօս: Նախագահը հազիւ պիտի սկսեր իր տնտեսական բարեկարգումի իրավիճակը, դատական հայց բացւեցաւ իր գաւազանի, եղբոր եւ նախկին դիւանապետին հանդէպ, ապօրինի հարստացումի եւ դրամ լուսլու ամբաստանութիւններով:

ԵՐՈՊԱ

ԲՈՂՈՔԻ ՄԵԾ ՇԱՐԺՈՒՄ

Գերմանիոյ մէջ հողագործներու բողոքին միացան Ֆրանսայի եւ Եթովպիայի երկիրներու հողագործներ: Ինչոք ալ երկիրներու հողագործներ ալ կը պատրաստուին միանալու այս շարժումին: Անոնք փակեցին մայրուղիներ ու երկիրները անդամալուծեցին: Այնպէս կ'երեւի թէ Երոպական միութեան վարած երկրագործական քաղաքականութիւնը բողոքի ալիքի պատճառն է: Ֆրանսա սկսաւ ճնշել Երոպական միութեան յանձնակատարութեան վրայ, որպէսզի առնէ քայլեր մեղմացնելու համար տնտեսական տագնապին ազդեցութիւնը հողագործներուն վրայ: Պիտի պահանջուի վերատեսութեան ենթարկել ուլքրանական արտադրութեան մուտքի ծաւալը, համաձայնագիրը Հարաւային Ամերիկայի երկիրներուն՝ «Մերքուտո»-ի հետ աճաւ երկրագործական արտադրութիւն ներածելու համար եւ կառավարական օժանդակութեան վերացուիլը վաճառելիքի գինի վրայէն: Հակառակ պարագային, այս շարժումը կրնայ ստանալ մեծ ծաւալ, մանաւանդ ներկայ դժուար պայմաններուն մէջ:

Ըստ վերլուծողներու, վերջին տարիներուն ընկերվարական կուսակցութիւններ եւ աշ կեդրոն կուսակցութիւններ իրենց խոստումները չկրցան գործադրել քուէարկողներուն համար: Արդիւնքը եղաւ Երոպայի մէջ տր շարժումի մը սկիզբը, որ կը կոչուի ամբոխավարութիւն կամ «փոփոխիկ»։ Այս շարժումի ղեկավարներ կը խոստանան իրենց քուէարկողներու բոլոր պահանջը գոհացնել ու այսպիսով կը հասնին իշխանութեան: Այս շարժումը ձայնորդելու է պատերազմները երկար տեւելու պարագային, մեծ հաւանականութեամբ Երոպայի մէջ ի յայտ պիտի ելլեն ծայրայեղ ազգայնական շարժումներ: Այս վտանգէն է որ կը զգուշանան մասնագետները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱՒԵՐՆԵՐ

Երոպայի մէջ սկսաւ ժողովրդային բողոքի շարժում մը, որուն յառաջամարտիկներն էին հողագործները Երոպական միութեան բոլոր երկիրներուն մէջ: Բողոքի հիմնական պատճառները Ուլքրանիոյ պատերազմին պատճառով ռուսական աճաւ քարիւղի բացակայութեան, վաճառելիքի գինի յաւելումն է: Հողագործը աւելի մեծ գումար կը վճարէ վաճառելիքի համար, մանաւանդ երկիրներու որոշումէն ետք վերցնելու պետական օժանդակութիւնը այս մարզին մէջ: Այս ճնշումին չհիմնարկով, հողագործները իշան փողոց ու փակեցին մայրաքաղաքներու եւ մեծ քաղաքներու մայրուղիները եւ մուտքերը: Ուլքրանիայէն ներածուած աճաւ արտադրութիւնն ալ պատճառներէն մէկն է, որովհետեւ շուկան լեցուց աճաւ ապրանքով: Երոպական միութեան քաղաքականութիւնն ալ կլիմայի տաքացումի դեմ դնելու համար, նուազեցուց օգտագործելու հողամասին տարածութիւնը: Այս բողոքին պատճառները չմեղմացնելու պարագային Երոպական միութիւնը պիտի դիմագրաւէ մեծ դժուարութիւն ու նոյնիսկ կրնայ տարբազարդուիլ:



Ուլքրանիոյ մէջ պատերազմի սկիզբէն ի վեր Երոպայ նուազեցուցած էր Հիւսսատան-Ռուսիա երկաթուղագիծին միջոցով ապրանքի փոխադրութիւնը: Սակայն, Կազայի պատերազմին պատճառով Եմէնի հուսիներուն կողմէ Կարմիր Ծովուն մէջ նաւարկութեան մասնակի արգելքէն ետք, այս երկաթուղագիծով ապրանքի փոխադրութիւնը Ծայրագոյն Արեւելքէն Երոպայ սկսած է յաւելում արձանագրել:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(Leading indicators) - Գ. ՄԱՍ

Տնտեսագիտութեան մէջ կան ցուցանիշներ, որոնք ցոյց կու տան շուկայի ուղղութիւնը: Անոնք կը կոչուին առաջ-նորոգող ցուցանիշներ: Այս թիւով պիտի շարունակենք ներկայացնել այդ ցուցանիշները: Հինգերորդ ցուցանիշն է շինութեան արտօնագրերու թիւը (Building Permits), որ ցոյց կու տայ տնտեսութեան վիճակը: Այս թիւը ցոյց կու տայ շինարարութեան մարզին զարգացումը: Եթէ արտօնագրերու թիւը յաւելում արձանագրէ, այս կը նշանակէ թէ երկրին տնտեսութիւնը կ'աճի: Հակառակ պարագային, ան ժխտական ցուցանիշ մըն է երկրի տնտեսութեան: Ներկայիս այս է վիճակը Արեւմուտքի եւ տնտեսական տագնապ ապրող երկիրներու մէջ:

Վեցերորդ կարելոր ցուցանիշն է առեւտուրի հաշուէկշիւը (Balance of trade): Այս ցուցանիշը ցոյց կու տայ երկրի առեւտուրի վիճակը: Եթէ երկիրը կ'արտածէ աւելի մեծ ծաւալով քան կը ներածէ, ուրեմն հաշուէկշիւը դրական է: Այս վիճակի մէջ է Հիւսսատանը, որ կ'արտածէ աւելի քան կը ներածէ: Մինչ ԱՄՆ-ի առեւտուրի հաշուէկշիւը երկար տարիներէ ի վեր ժխտական է: Այսինքն, երկիրը կը ներածէ աւելի քան կ'արտածէ: Այս բացը կը փակուի տպելով ու վաճառելով պարտքի տոմսեր կամ պարտատուր-հակներ: Երկիրը պարտքի դրամ կը վերցնէ դրամատուներէ, երկիրներէ ու անհատներէ որպէսզի կարենայ գնել ներածուած ապրանքը: Երկար ժամանակի վրայ այս բաց պիտի աւելցնէ երկրի արտաքին պարտքը իր ժխտական հետեւանքներով: Այս վիճակի մէջ էր Լիբանան երկար տարիներէ ի վեր ու արդիւնքը եղաւ տնտեսական անկումը:

Արդիւնքը՝ «Տը Էքոնոմիկս», «Ռաշա Թուտէյ», «Աուալու» եւ «Ալ Տիլար»

Վ. ԹՈՒՐԵՆԱՆ

ՓՈԼԻՍՈՓՈՎԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

- 7 -

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՈԼՈՒԹԻՒՆ

Մեր նախանցեալ մտորումներուն մէջ ծանրացանք մարդ արարածի գանազանելու կարողութեան, ինչպէս նաեւ ճշմարտութիւնը որոնելու կարելիութեան վրայ: Այս կարգի դրական վերաբերումները հիմնուին աղերս ունին բանականութեան հետ: Այս վերջինը թէւ անիրաժէշտ է կենցաղավարութեան ուղիղ ընթացքը ապահովելու ուղղութեամբ, սակայն բաւարար չէ կառուցելու բարի եւ արդար կեանք մը: Որովհետեւ «բարի եւ ճիշդ» կեանքի մը կարգավորումը կը պահանջէ «բարոյական արժէքներ» ու իւրացումը եւ այս ուղղութեամբ վտարած ջանքն ու կամքը:

Առաքինութիւնը, ինչպէս Արիստոտել կը սահմանէ, վաւակար ծայրայեղութիւններու միջեւ գտնուող «ճշգրիտ չափ»ն է: Ըստ իրեն, «առաքինութիւնները բնականօրէն ենթակայ են մարելու միանգամայն, թէ՛ չափազանցութեան եւ թէ՛ թերացումի հետեւանքով»: Ան որ կը խրտչի, կը վախնայ եւ կը փախի ամէն կարգի վտանգներէ, եւ ոչ մէկ բան կը հանդուրժէ, թոյլ մէկն է: Իսկ ան որ ոչ մէկ բանէ կը վախնայ, կը նետուի ամէն կարգի վտանգի դեմ, յանդուրժ, նոյնիսկ յախուռն մէկն է: Միս կողմէ, այն անձը որ կ'ուզէ վայելել ամէն տեսակի հաճոյք, առանց բացառելու ոչ մէկը, գեղի կամ ցոփ կ'անուանենք զինք: Իսկ ան որ ինքզինք կը զրկէ ամէն տեսակի հաճոյքէ, անզգայ անձ մըն է: Ուրեմն չափաւորութիւնը եւ քաջութիւնը կը չքանան ծայրայեղութեամբ, ինչպէս նաեւ թերացումով, իսկ կը պահպանուին «ճշգրիտ չափ»ով: Առաքինութիւնը ուրեմն հաւասարակշռութեան այն կետը կամ հակադրանքն է, որ մեզի կը թոյլատրաւ կատարել ճիշդ արարքը՝ մեր կամքը ի գործ դնելով, առանց չափազանցութեան դիմելու, միաժամանակ երկու ծայրայեղութիւններու պարագային: Հոս հարց մը կը ծագի. արդեօք կարծուածին չափ դիրքի՞ն է հասնիլ վերեւ յիշուած հաւասարակշռութեան կետին: Մարդիկ, որոնք կը միտին մերժել ամէն տեսակի հաճոյքները, երբեմն հակում ունին ուղղակի գրկուելու աննցմէ ամբողջովին, դիմելով նոյնիսկ ճգնաժամի կեանքին: Այս վերջինը չափազանցութեան մէկ ուրիշ տարբերակն է, եւ ի բաց առեալ կրօնական մեկուսացման պարագաներէ, հաւասարակշիռ առաքինութեան չի համապատասխանէր:

Որո՞նք են առաքինութեան տարբեր եզրերը, որ մարդ պարտի իւրացնել եւ զարգացնել: Հին յոյն քաղաքակրթութիւնը, Փիթագորասէն մինչեւ Արիստոտել, հետեւեալ մարդկային որակներու վրայ կը ծանրանայ՝ խստուղիւն, քաջութիւն, չափաւորութիւն, ինքնակառավարում, գուշակութիւն, ժուժկալութիւն եւ արդարութիւն: Այս բարեմասնութիւնները միաժամանակ իմաստութիւն եւ բանականութիւն կը պահանջեն եւ լայնօրէն կախում ունին դաստիարակութենէ, որ մարդ արարածը կը ստանայ իր կրթական թէ ընտանեկան շրջանակին մէջ: Վերոյիշեալ ստորագելիները գաղափարական կատարելութեան դրսեւորումն են միաժամանակ եւ մարդ արարածը երջանկութեան կը հասցնեն:

Գալով մոլութեան՝ վատառողջ վարժութիւններու եւ ծախորդ, չարաղետ վարուելակերպերու ամբողջութիւնն է: Կան նիւթական եւ ֆիզիքական մոլութիւններ, ինչպէս՝ ծխամոլութիւնը, ալքոլամոլութիւնը, շատակերութիւնը եւլկ, եւ կան բարոյական մոլութիւններ, ինչպէս՝ կողմակալութիւնը, թշնամութիւնը, տխմարութիւնը եւ չափազանցուած վախը: Քրիստոնեայ բարոյականը Արիստոտելի վերեւ յիշուած առաքինութիւններուն կ'աւելցնէ հետեւեալ երեքը՝ հաւատք, յոյս եւ սէր, որոնք կը կրթաւոր ցանկութիւնները կը ներկայացնեն նորակնիք երախայի բրիստոնեայ օժան ընթացքին:

Իմաստասիրական եւ հոգեկան անհոգութիւնները, ինչպէս նաեւ անհատական փորձառութիւնը ցոյց տուած են, որ առաքինութիւնը կը նմանի հողը ցանուած հունտի մը, որ պէտք ունի ջուրի, արեւի ճառագայթներուն եւ մարդկային խմամբի, որպէսզի ուռճանայ եւ զարգանայ: Առաքինի ըլլալու համար նախ պէտք է ունենալ ցանկութիւն, ապա աշխատիլ եւ ձգտիլ պահպանել, նոյնիսկ զարգացնել զայն:

Պատրաստեց՝ ՍՈՒՐԵՆ ԸՆԵՐԻԷ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒ ԶՈՒՅՏԵՐԻԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԱԾ ԵՆ

(Շարունակուած Ա. Էջէն)

Կողմերը գոհունակութեամբ արձանագրած են Հայաստանի եւ Զուլիգերիոյ միջեւ քաղաքական երկխօսութեան բարձր մակարդակը, բնարկած են երկկողմ յարաբերութիւններու օրակարգին առնչուող հարցերու լայն շրջանակ: Երկուստեք ընդգծուած է առկա համագործակցութեան զարգացման անհրաժէշտութիւնը՝ տնտեսութեան, բարձր արհեստագիտութիւններու, մշակոյթի, գրօսաշրջութեան եւ այլ ոլորտներու մէջ:

Անդրադարձ կատարուած է միջազգային հարթակներու վրայ արդիւնաւետ համագործակցութեան եւ անոնց շրջանակներուն մէջ փոխադարձ աջակցութեան հնարարութիւններու:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուած է նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին: Հայկական կողմը ներկայացուցած է ՀՀ կառավարութեան կողմէ մշակուած «Խաղաղութեան խաչմերուկ» ծրագիրը:

Միտքեր փոխանակուած են նաեւ տարածաշրջանային եւ միջազգային անվտանգութեան հարցերու շուրջ:

ԱՄԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԻՍՍԱՐՏԱՐՏԱԿԱՆ ԶԱԹԱՐ ԴԵՊԻ ԱՄԱՐՏԱԿԱՆ

Քաթարի մարզադաշտերուն վրայ շարունակուեցան Ասիոյ ֆուտբոլի բաժանի կիսաարտական հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի երկրորդ մրցումին, այս մրցաշարի անակնկալ կազմակերպիչ Քաթարի հաւաքականը մրցեցաւ Իրանի գորաւոր հաւաքականին դէմ,



մայրաքաղաք Տոհայի մարզադաշտին վրայ: Հաւասարակշռուած մրցումի 4-րդ վայրկեանին, «Ռոմա»-ի յարձակող Ազունու Նշանակեց Իրանի կողմ: Սակայն, կիսապաշտպան Շատեմ Շապոր՝ 17-րդ եւ յաճախակալ Աբրամ Աֆիֆ հաշիւը դարձուցին 3-2 ի նպաստ Քաթարի, Աբրամ Աֆիֆի եւ կիսապաշտպան Ահմատ Ֆաթիհի փոխանցումներով: Մրցումի 51-րդ վայրկեանին, յարձակող Շահանապահ Տուգանային հարուածով հաշիւը դարձուց 2-2, օգտուելով Ահմատ Ֆաթիհի սխալէն: Իսկ 82-րդ վայրկեանին, յարձակող Ալմուհազ Ալի հաշիւը դարձուց 3-2, փոխարինող Ապտիլազիզ Չաթեմի փոխանցումով: Քաթար յաղթանակ տարաւ ու հասաւ արտական փուլ, ուր պիտի մրցի Յորդանանի հաւաքականին դէմ: Ստորեւ տեսել արձանագրուած արդիւնքը.

- Քաթար - Իրան 3-2

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՅԵՐ ՅԱՂԹԵՑ ԾՅՈՒԹԿԱՐԹԻՆ

Գերմանիոյ ֆուտբոլի բաժանի քառորդ արտական հանգրուանի մրցումներուն, առաջատար «Պայեր Լեվերըզը» իր դաշտին վրայ ընդունեց 3-րդ դիրքը գրաւող Ըթուրկարթը»: Հաւասարակշռուած մրցումին, կիսա-



պաշտպան Անտրիխ՝ 50-րդ, փոխարինող մարտիկ յարձակող Ատիլի՝ 66-րդ եւ պաշտպան Թահ՝ 90-րդ վայրկեաններուն նշանակեցին «Պայեր»-ի կողմը, յարձակող Վիրձի երկու փոխանցումներով: Իսկ պաշտպան Ալթոն՝ 11-րդ եւ կիսապաշտպան Ֆուհրիզ՝ 58-րդ վայրկեաններուն նշանակեցին «Ըթուրկարթ»-ի կողմը, կիսապաշտպան Սթիլըրի եւ ֆրանսացի յարձակող Միլոյի փոխանցումներով: «Պայեր Լեվերըզը» յաղթանակ տարաւ: Ստորեւ տեսել արձանագրուած արդիւնքը.

- Պայեր Լեվերըզը (Ա.) - Ըթուրկարթ (Ա.) 3-2

-ԱՅՍՕՐՈՒԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

ԶՈՓԱ ԼԻԳԱՅԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԶՈՒՄԻ Ա. ՀԱՆԳՐ. ԵՐԹ
02:30 Աուրաս Զուրթո (57) - Լասիոնալ Աուսիսիոն (90)
ՖՐԱՆՍԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ՄԱՐՏԱԿԱՆ
21:45 Ռուան (Գ.) - Սոնաբո (Ա.)
ՓՈՐՏԱԿԱՆ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ՄԱՐՏԱԿԱՆ
20:45 Վիթորիա Կիմարայեշ (5) - Օլիմպիկ (10)
22:45 Վիգելա (18) - Պեմֆրեա (2)
ՀՈՒՆԱՏԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ՄԱՐՏԱԿԱՆ
21:00 Կրոնիկըն (Բ.) - Ֆորթուա Սիթար (Ա.)
ՊԵՆՏԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍՍԱՐՏԱՐՏԱԿԱՆ ԵՐԹ
21:00 ԶԿ Օսթեմո (Բ.) - Անվեր (Ա.)
ԱՐԺԱՆԹԻՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ Ա. ՓՈՒԼԻ 4-ՐԴ ՀԱՆԳՐ.
00:30 Ռոզարիո Անթարալ (10) - Իստիփ. Ռիվատալիա (4)
02:30 Հուրաքան (9) - Իստիփեյնտիկեթ (6)

ՊԱՅԵԹՊՈՒԼԻ ԵՆ. ՊԻ.ԵՅ.-Ի ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ
02:30 Նիլ Եորը Նիքս (4) - Տալաս Մեմլիք (8)
05:00 ԼԱ Լեյքըր (9) - Տեմլըր Նակեց (4)
ՊԱՅԵԹՊՈՒԼԻ ԵՆՈՐՈՒԼԻԿԻ 26-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ
19:30 Անտուլու Էֆէս (16) - Մաքայի ԹԱ (10)
21:30 Արմանի Միլան (13) - Ռեալ Մատրիտ (1)
21:30 Վալենսիա Պաքեթ (8) - Օլիմպիկոս Փրեոս (7)
ԹԵՆԻՍԻ ԱՊՈՒ ՏՀԱՊԻԻ ԿԻՍՍԱՐՏԱՐՏԱԿԱՆ ԵՐԹ. 1/8-ՐԴ ՄԱՐՏ.
10:00-Էն սկսեալ, «beinsports» կայանէն
ՅԵՏԵԼԱՐՇԱՐ
15:15 Tour De La Provence շրջավազը, «eurosport»-էն
17:30-Էն սկսեալ Գոլմպիայի շրջավազը, «eurosport»-էն
ԼՈՂԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ
08:00-Էն սկսեալ, «beinsports» կայանէն:

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՏԻԿ. ՎԱՐԴՈՒՄԻ ԱՐԱՋԱՐԵԱՆ-ՆԱՃԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ժամանակի հոլովոյթի ընթացքին, որը շրջանակներէ ներս, ի յայտ կու գան դեմքեր, որոնք տեղուն գործունէութեանց պատմութեան էջերուն կ'անցնին, որպէս ներգործող ուժ եւ պատուաստող արմատ: Այդպիսիներէն էր հանգուցեալ Տիկ. Վարդուհի Նաճարեանը՝ որ Դամասկոսի հայ համայնքին կրթամշակութային հարթակին վրայ՝ անցնելի հետքեր թողուց իր որոշարիչ դերով:



Ստաւորապէս յիսուն տարիներու վրայ երկարող իր շոշափելի վաստակը՝ Դամասկոսի Հ.Բ.Ը.Մ.-ի Կիլլայի Կիլլայէնեան (Նախկին Սահակեան) Վարժարանէն ներս, հիմնական ներկայութիւն հանդիսացաւ իրերայաջորդ սերունդներու կեանքին մէջ, որպէս հայերէն լեզուի եւ երաժշտութեան դասատու:

Անոր ծառայութեան անդաստանը լայն էր, վարակիչ կենսունակութեամբ առցուն: Հանգուցեալ Տիկ. Նաճարեանին համար ուսուցչական ասպարեզը գործ էր, այլ կոչում էր նուիրում. իր կեանքի ամենադժուար պայմաններուն իսկ չէր բացակայէր իր թանկագին դասապահներէն, յարատեւութեամբ եւ յանձնառութեամբ շարունակելով իրեն վստահուած անաբեութիւնը: Հանգուցեալը հայեցի դաստիարակութեան եւ երաժշտութեան ամբողջատեւեր յառաջապահներէն էր, յատկանշուած կատարելի ձգտումով, որուն սիրտը միշտ բաբախեց հայկական կշռոյթով:

Տարիներ շարունակ, ամբողջ օրուայ տեւողութեան, վարժարանին շէնքը կը լցունէր աշակերտներուն երգերուն քաղցրիկ հնչիւններով: Անոնցմէ շատերը տակաւին պահած են ամուսնաւալի այդ երգերուն տետրակը:

Հայերէն լեզուն իրեն համար սրբութիւն սրբոց էր եւ կը տքնէր Նոյն գագոնը փոխանցել մատղաշ սերունդի գաւակներուն՝ կատարելապէս անձնուիրութեամբ, անհոգութեան դիմաց մեծապէս տանջուելով, աներէր մալով խստապահանջի իր դիրքին վրայ: Ինչպէ՞ս կարելի էր անտեսել մեր ինքնութիւնը...:

Հ.Բ.Ը.Մ.-ի Կիլլայի Կիլլայէնեան Յառաջապահ Վարժարանը՝ հայ լեզուի եւ ինքնութեան անհղապահ դարձնողը, իր նուիրական յարկէն ներս, բոլոր ազգային եւ եկեղեցական միջէն օրս, կը նշուին պատշաճ կերպով: Հանգուցեալ Տիկ. Նաճարեանին մեղուաշուն աշխատանքին որպէս արդիւն՝ այդ բոլոր առիթներուն, յատկապէս կը ճոխանար օրուայ խորհուրդը ներկայացնող երգերով: Իսկ ամավերջի հանդէսներուն բաժին եղող երգացանկը կ'ոգեւորէր ներկաները եւ կ'արժանանար բարձր գնահատանքի:

Ան միշտ պրպտուցի մէջ էր: Նորագոյն երգեր, մանկական բառախաղեր եւ ժամանակակից մեթոտներով պատրաստուած քերականական թերթիկներ ու շատ մը ուրիշ ձեւեր կ'որդեգրէր, համաշխարհայնացումի եւ համացանցի այս դարուն՝ դասաւանդած նիւթը անելի հետաքրքրական դարձնելու ձգտումով: Իր պայտասկը միշտ լցուն էր քաղցրաւեանից ու գրեական պիտոյներով՝ մայրական գործով վարձատրելու աշխատանքը:

Հանգուցեալ Տիկ. Նաճարեանին համար, բացակայ ուսուցչուհիի մը դասապահը հիանալի առիթ էր անմիջապէս տուեալ դասարանը փութալու եւ նորութիւն մը սորվեցնելու: Պատահած է, որ տարիներ առաջ, ամառնային արձակուրդը օգտագործելով, շաբաթը ըստի մը անգամ, փոքրիկները իր տան մէջ հաւաքելով՝ անոնց հայերէն երգեր սորվեցուցած է, անկախ դպրոցական ծրագիրներէն:

Հանգուցեալ Տիկ. Նաճարեան եղած է նաեւ դաշնակի վաստակաւոր ուսուցչուհի: Անոր բծախնդիր ջանքերուն շնորհիւ, իր աշակերտներէն շատերը ընդունուած են Դամասկոսի երաժշտական Բարձրագոյն Ուսումնարանը եւ մեծ յաջողութեամբ արարած: Անոնցմէ ոմանք այսօր դարձած են երաժշտութեան ուսուցչուհիներ:

Հանգուցեալ Տիկ. Վարդուհի Նաճարեան կռանց իրերայաջորդ սերունդները մայրենիի եւ հայ երաժշտութեան դաւարագեղ անդաստաններէն ներս: Այս վաստակաշատ, համեստ մշակին աշակերտները երախտագիտութեամբ եւ ակնածանքով պիտի յիշեն իրենց երբեմնի ուսուցչուհիին:

Դամասկոսի հայ համայնքը եւ ՀԲԸՄ-ի Կիլլայի Կիլլայէնեան Յառաջապահ Վարժարանի խնամակալութիւնն ու ընտանիքը կը սգան հանգուցեալ Տիկ. Վարդուհի Նաճարեանին կորուստը եւ իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն անոր որդուին՝ Տիար Արթուր Նաճարեանին եւ ընտանեկան պարագաներուն:

Վարձքը կատար՝ վաստակը արդար հողը թեթեւ եւ յիշատակը անթառամ

Կ.Կ. Յառաջապահ Վարժարանի Խնամակալութիւն

BOGHOS OPTIC
Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016

Մերձաւոր Արեւելի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն
ՄԻԱՑԵԱԼ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ
SOL ՄՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ
Պատգամաբեր՝
ՎԵՐ. ՅՈՂԱՆՆԵՍ ՍՎԱԾԵԱՆ
Հովիւ Հայ Աւետ. Էմմանուէլ Եկեղեցու
Գեղարուեստական բաժին՝
Հայ Աւետ. Կ.Վ. աշակերտներուն կողմէ
Հինգշաբթի, 8 Փետրուար 2024, կ.ա. ժամը 10:30-ին, Հայ Աւետարանական Էմմանուէլ Եկեղեցի, Նոր Ամանոս:

Հայկազեան Համալսարան Հայագիտական Ամբիոն

Ընդհանուր

Հայկազեան Հայագիտական Հանդէսի 2023 տարուան 43/1 եւ 43/2 գոյգ գիրքերուն Պէլրոյֆ՝

Հայկազեան Համալսարանի հանդիսարան, 2-րդ քաղաք, 14 Փետրուար 2024, երեկոյեան ժամը 6-ին: Երեւան՝

Հայոց Տեղապահութեան թանգարան-ինստիտուտ, Ուրբաթ, 16 Փետրուար 2024, կ.ետք ժամը 3-ին:

Մ Ա Հ Ա Զ Դ

Տիկ. Մարի Արսլանեան
Տեր եւ Տիկ. Գրիգոր եւ Հիլաւ Արսլանեան
Տեր եւ Տիկ. Գեորգ եւ Լեւա Թերզիպաշեան
Տեր եւ Տիկ. Ժորայր եւ Ալինա Թանկուբեան
Տեր եւ Տիկ. Յարութիւն եւ Թեմի Արսլանեան եւ դուստրը (ԱՄՆ)
Տեր եւ Տիկ. Յովհաննէս եւ Մելոյի Արսլանեան եւ զաւակուցը
Տեր եւ Տիկ. Կարո եւ Լալէ Թերզիպաշեան եւ զաւակուցը (ԱՄՆ)
Տեր եւ Տիկ. Վազգէն եւ Վերա Գոլանեան եւ դուստրը
Տեր եւ Տիկ. Անդրանիկ եւ Լարա Թանկուբեան եւ զաւակուցը
Տեր եւ Տիկ. Յարութիւն եւ Մելոյի Թանկուբեան եւ զաւակը (Հայաստան)
Հանգուցեալ Յակոբ Արսլանեանի զաւակները՝ Գրիգոր, Ծորձ եւ Անի
Հանգուցեալ Բիւզանդ Արսլանեանի զաւակները՝ Գրիգոր, Յակոբ, Անի եւ Շողիկ
Հանգուցեալ Հրանդ Արսլանեանի զաւակները՝ Արմէն, Մարալ եւ Սալթի
Արսլանեան եւ Զեյնէյան ընտանիքներ
Թերզիպաշեան եւ Թանկուբեան ընտանիքներ
Անտոնեան եւ Միրզախանեան ընտանիքներ
Մելքիսէթեան եւ Շողուրթեան ընտանիքներ
Գոլանեան եւ Ծուլֆայեան ընտանիքներ
Պուտակեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուծեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, հօրեղբօր եւ հարազատին՝

ՅԱՐՈՒԹԻՆ ԱՐՍԼԱՆԵԱՆ-Ի
(Ծնեալ Պէլրոյֆ, 1925-ին)

մահը, որ պատահեցաւ 2-րդ քաղաքի, 7 Փետրուար 2024-ին, առաւօտեան ժամը 4:00-ին, իր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, 8 Փետրուար 2024-ին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Անթիլիասի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգ. գերեզմանատունը:

Ներկայս ընդունիլ իբրեւ մահագոյ:

Յաւակցութիւնները կ'ընդունուին թաղման արարողութենէն ետք, Ազգ. Առաջնորդարանի «Երջօ-Սամուէլեան-Երջօ» սրահին մէջ, մինչեւ երեկոյեան ժամը 7:00, ինչպէս նաեւ Ուրբաթ, 9 Փետրուարին, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00, Նոյն վայրին մէջ:

ԾԱՆՕԹ.- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել Ազգային առաջնորդարանի «Աշակերտ հովանաւորել» ծրագրին:

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المديرية المسؤولة: أني صرافيان
تصدر عن شركة مسيسر والمطبعة والنشر (ش.م.م.)